23 դեկտեմբերի 2016 թ. N 857-Ա

ք. Ստեփանակերտ

2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՑՐՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԾ ԾԽԱԽՈՏԻ ԴԱՇՏԵՐԻ ՏԵՐԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2016 թվականին ցրտահարությունից տուժած ծխախոտի դաշտերի տերերին (այսուհետ՝ հողօգտագործողներ) պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով՝ «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. 2016 թվականին ցրտահարությունից տուժած հողօգտագործողներին ոչնչացված բերքի յուրաքանչյուր 1 կիլոգրամի դիմաց միանվագ տրամադրել 30 (երեսուն) ՀՀ դրամ գումարի չափով պետական աջակցություն:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի 04 բաժնի 2 խմբի 1 դասի «12 Գյուղատնտեսական միջոցառումների իրականացման ծրագրեր» ծախսային ծրագրի «Գարնանացան մշակաբույսերի ցանքաշրջանառության ծրագրերի խթանում» միջոցառմամբ նախատեսված միջոցներից, սույն որոշման 1-ին կետով նախատեսված պետական աջակցության գործընթացն ապահովելու նպատակով, 21 750 000 (քսանմեկ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով գումարը հատկացնել հողօգտագործողներին՝ համաձայն հավելվածի:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2016 թվականի դեկտեմբերի 23-ի
N 857-Ա որոշման

ՑԱՆԿ
2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՑՐՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԾ՝ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ

Հ/հ	Հողօգտագործողի ազգանուն, անուն, հայրանուն	Տարածք (հա)	Ցրտահարված բերք (կգ)	Տրամադրվող գումար (ՀՀ դրամ)
1	Բաբաջանյան Էդուարդ Յուրիկի	2,0	30 000	900 000
2	Բալայան Արմեն Սերգեյի	1,0	10 000	300 000
3	Գաբրիելյան Իրա Խաչատուրի	1,0	10 000	300 000
4	Գրիգորյան Ռոբերտ Վազգենի	0,5	5 000	150 000
5	Դանիելյան Վադիմ Վիլենի	1,5	20 000	600 000
6	Հարությունյան Լարիսա Ռոդիկի	1,5	25 000	750 000
7	Ղարիբյան Ռիտա Նարիմանի	1,5	25 000	750 000
8	Մելքոնյան Սուսաննա Սմբատի	0,5	5 000	150 000
9	Միրզոյան Հունան Վալերիի	0,5	5 000	150 000
10	Մխիթարյան Աշոտ Վանուշի	3,5	60 000	1 800 000
11	Ալլահվերդյան Անդրանիկ Լազարի	6,0	110 000	3 300 000
12	Գրիգորյան Սանասար Գեորգիի	8	90 000	2 700 000
13	Ավանեսյան Լևոն Ավերիկի	2,5	40 000	1 200 000
14	Մնացականյան Հրայր Շամիրի	3	50 000	1 500 000
15	Պետրոսյան Հայրապետ Գրիգորիի	20	130 000	3 900 000
16	Հովսեփյան Մամիկոն Արմիկի	4	60 000	1 800 000
17	Զաքարյան Արարատ Մառլենի	3	50 000	1 500 000
ԸՆԴԱՄԵՆԸ		**60,0**	**725 000**	**21 750 000**

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ **Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**